ՔՍԱՆԵԻԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ—ԹԻՒ 2381 ԵՐԵՔՇԱԲԹԻ 25 ՄԱՐՏ—Ն Տ 6—ԱՊՐԻԼ—1880

ԳԱՅՄԱՆԷ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 10 մէջ.
» » Գաւառաց » 12 »
Վեցամսեայ » Կ. Պոլսոյ » 8 »
» » Գաւառաց » 6 »
Յատակ երկիրներու » 21/2 լ.

Յանուցման տողը մէկ անգամի համար 3 զուրուշ, երկու անգամի համար 2 զրշ է. աւելի անգամներու համար զաւ սակարկութիւն կըլլայ։

Իւրաքանչիւր թիւ 40 փարա արժ։

ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱՀԱՍԱՐԱԿ

ԳԱՅՄԱՆԷ

Դուրս գնացած լրագրաց ճանրաւ ծախքը խմբագրութեան վրայ է։

Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ օր և իցէ գրութիւն խմբագիրը—Ցնորէնին տիպի ուղղուի, Գալաթիա Սանտրքճըլար Ճատտէսի թիւ 198, Ղօրս խան, Մասիսի գրասենեակը։

Ճանրաւ ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։

Զտպուած նամակ, յօդուած, ետ չեն տրուիր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ,

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 25 ՄԱՐՏ

ԱԶԴ

Տպարանի գործաւորներէն ոմանց անակնկալ հիւանդութեան պատճառաւ թերթս երէկ չկրցաւ հրատարակիլ, որուն համար ընթերցողաց ներողամտութիւնը կը խնդրեմք։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մինչև շաբաթ երիկուն Լոնտրայէն եկած հեռագիրք կը շարունակէին ազատականաց յաղթութիւնները ծանուցանել։ Հեռագիր մը կըսէր թէ մինչև շաբաթ՝ ազատականք 18 աթոռ կորուսած և 67 աթոռ շահած են. այսինքն, մինչև ցարդ ազատականաց ձեռքը գտնուող 18 քաղաքներ պահպանողական երեսփոխան ընտրած են. իսկ պահպանողական երեսփոխան ունեցող 67 քաղաքներ ազատական երեսփոխան ընտրած են. յորմէ կը հետևի թէ մինչև շաբաթ օրն ազատականք 49 աթոռ շահած էին։ Թէ և ընտրութեանց ամենամեծ մասին արդիւնքը տակաւին ասկէ վերջը պիտի հասկցուի, այսու ամենայնիւ, մինչև ցարդ ծանուցեալ արդիւնքն ալ իրաց այնպիսի վիճակ մ'երևան կը հանէ, զոր օգտակար է լաւ քննել, ըստ որում այս ընտրութիւնք մեծ կարևորութիւն ունին Թուրքիոյ համար։

Նախ պէտք է ճշդել սա կէտը թէ այս ընդհանուր ընտրութիւններէն առաջ կատարուած մի քանի մասնաւոր ընտրութեանց մէջ ազատականաց յաղթութիւն առանձին պատճառաց արդիւնքն էր, որք արտաքին և ներքին աշխարհավարութեան բարձրագոյն խնդրոյ հետ վերաբերութիւն չունէին։ Ընտրութեան մը ժամանակ ազատականք բաժանեալ էին, մէկէն աւելի ընտրելի ունէին, որով պահպանողական ընտրելին յաղթող կ'ելներ։ Ուրիշ առթի մը մէջ ազատականաց դէմ կասկած կար թէ Իրլանտիոյ ինքնավարութիւն պահանջող կուսակցութեան, այն է Հօմ—Ռուլըներուն նպաստաւոր են։ Արտաքին աշխարհավարութեան նկատմամբ ալ Պ. Կլատսթոնի կարուկ քանախոսութիւնները կարծել տուած էին չափաւոր դաղափար ունեցող Անդղիացւոց թէ՝ ազատականք իշխանութեան դլուխ անցած ժամանակ արդի նախարարութեան աշխարհավարութիւնն հիմնովին պիտի տապալեն և Եւրոպիոյ մէջ շփոթութիւն պիտի պատճառեն։ Ազատականք իրենց այս տկար կողմերը տակաւ առ տակաւ ամրացուցին՝ հետզհետէ միութիւն հաստատելով իրենց մէջ, իրլանտական ինքնօրինութեան խնդրոյն վրայ իրենց դաղափարները բացատրելով, և ապահովցնելով իրենց ընտրողները թէ Անդղիոյ արդի միջազդային պարտականութիւնները պիտի յարգեն որչափ որ հնար է։ Լորտ Հարթինթընի չափաւոր և համեղիչ խօսքերն յաջողութեան մեծ տարը մը կրնան նըկատուիլ ազատականաց դատին համար, մինչդեռ Պ. Ճոն Պրայթ և Պ. Կլատսթոն ծայրայեղ խօսքերով ընտրողաց մէկ մասին միայն կրնային հաճելի լինիլ։ Այս միջոցիս ազատականք ընդարձակօրէն կը խօսին Թուրքիոյ գործոց և ընդհանրապէս արևելեան աշխարհավարութեան վրայ. և թէպէտ այս նկատմամբ եղած բանախօսութեանց մէկ մասն արդէն լսուած բաներն են, և մէկ մասն ալ թարգմանել աններելի է, կրնամք սակայն յիշել Լորտ Հարթինթընի այն խօսքը թէ երբ ազատականք իշխանութեան անցնին, Եւրոպական տերութեանց հետ պիտի միանան ստիպելու Պ-ուրքիա, որ Պերլինի դաշնագրով խոստացած բարենորոգումներն անյապաղ գործադրէ։

Այսու ամենայնիւ, դիտելի է որ թէ և անդղիական հասարակութիւնը մեծ ուշադրութիւն կ'ընծայէ արդի ընտրութեանց, սակայն այժմ չկայ հասարակային զդացման այն զօրաւոր հոսանքն, որ Սըր Ռօպերթ Փիլ իշխանութեան բերաւ 1841ին, Լորտ Փալմէրսթոնն 1857 ին կամ Պ. Կլատսթոնն 1868ին։ Երկու կողմն ալ այժմ գրեթէ հաւասար զօրութեամբ կը մարտնչին, և Թայմզ լրագիրը մարտ 24 թուով թերթին մէջ, զոր սեր շաբաթ աւուր տեսութեան հրատարակուելէն ետքը տեսանք, մեր այն խոնարհ կարծիքը կը հաստատէ թէ ներկայ ընտրութեանց հետևանօք կա'մ պահպանողականք իշխանութեան վրայ պիտի մնան յոյժ փոքր մեծամասնութեամբ մը, և կա'մ ազատականք իշխանութեան պիտի անցնին նոյնպէս տկար մեծամասնութեամբ մը, և իրենց դէմ ունենալով պահպանողական կուսակցութեան զօրաւոր փոքրամասնութիւնն. այսինքն, ոչ պահպանողականք՝ ոչ ալ ազատականք՝ ըստաւար մեծամասնութիւն մը չպիտի կըրնան շահիլ։ Ուստի Թայմզ, որ միշտ ամենայերմ պաշտպանն եղած է Լորտ Պիքոնսֆիլտի նախարարութեան, խորհուրդ կուտայ ազատականաց, որ իրենց աշխարհավարութիւնը լաւ սահմանեն, չափաւոր ընթացք մը բռնեն, այնպէս որ, եթէ իշխանութեան անցնին, փոքր մեծամասնութեամբ մը կարենան պաշտօն վարել։ Եւ արդարև, 1852–57 ի երեսփոխանական ժողովին մէջ ազատականք տասն երեք աթոռի մեծամասնութիւն միայն ունէին, և սակայն յաջողեցան այնպիսի ընթացք մը բռնել, որով հետզհետէ զօրացան թէ խորհրդարանին և թէ երկրին մէջ. և երբ 1857 ին Լորտ Փալմէրսթոն ազատական նախարարութեան դլուխ եղաւ, ազատականաց զօրութիւնն անդիմադրելի էր։ Ուստի, եթէ Լորտ Պիքոնսֆիլտ այն տկար մեծամասնութիւնն իսկ չունենայ, որ իրեն ներկայ կեղակարծ իշխանութիւն մը վարել, և ազատականք փոքր մեծամասնութեամբ մ'իշխանութեան անցնին, կրնան իրենց դիրքն ապագային մէջ ամրացընել, բաւական է որ լուրջ աշխարհավարութիւն մ'ունենան, և Թայմզի՝ Անդղիական խորհրդարանին լուծման օրը կը հասկցնէր թէ այդպիսի արդիւնք մ'անհաւանական չէ, և բաւական դոհութիւն կը ցուցընէր Լորտ Հարթինթընի ընթացքին։

Արևելեան Քրիստոնեայ ժողովրդոց համար ալ մեծ կարևորութիւն ունին այս ընտրութիւններն. և Լորտ Հարթինթընի այն խօսքերը թէ Ազատականք կարծուածին չափ անմիջամիջամտութեան աշխարհավարութիւնը չպիտի բռնեն, և իրենց դաղափարներն արդի վիճակին պահանջմանց պիտի համաձայնեցնեն, անտարակոյս մեծ դոհութիւն պիտի պատճառեն Սրև ելից մէջ։ Մենք միշտ փափաք յայտնած էինք որ Փոքր-Ասիոյ բարենորոգումները կարելի եղածին չափ փութով դործադրին, և Լորտ Պիքոնսֆիլտի նման Օսմանեան կառավարութեան նպաստաւոր նախարարութեան մը հակառակորդները զինաթափ լինին։ Օսմանեան աէրութեան բարեկամ եղող շատ անձինք կը յուսային թէ այդպէս պիտի լինէր, և թէ Պերլինի դաշնագրին կնքուելէն երկու տարի յետոյ. Բ. Դուռը Պերլինի դաշնագրութեան 61 րդ և 23րդ յօդուածոց գործադրութեան մէջ բաւական քայլեր առած պիտի տեսնուէր։ Դժբաղդաբար այնպէս չեղաւ, և Ասիական Թուրքիայէն եկած վերջին լուրերն առաջին յոյսերն անդամ չեն թողուր։ Իրաց այս վիճակը մեծ զէնք մ'եղաւ ազատականաց ձեռք, որք կերևի թէ խոստումներով չեն շատանար, և այժմ հաւանականութիւն կայ որ անոնք իշխանութեան անցնին։ Մանաւանդ թէ Լորտ Հարթինթընի կուսակիցները կը յայտարարեն թէ Արևելից փոքր ազդութեանց շահերն իրենց ձեռք պիտի առնուն և այդ մասին Լորտ Պիքոնսֆիլտի նախարարութենէն տարբեր ընթացք մը պիտի բռնեն։ Թէ՛ այս պատահականութիւնն և թէ՛ այն երբ իր դը թէ ազատական նախարարութիւն մ'աւելի նպաստաւոր պիտի լինի Թուրքիոյ քան արդի պահպանողական նախարարութիւնն, այս երկու իրողութիւնք Բ. Դրան նախարարաց մտահոդութիւն կրնան պատճառել։ Այսու ամենայնիւ, առողջ աշխարհավարութիւն մ'ամենէն ձախող դիրք ունեցող կառավարութիւններն անդամ կրնայ փրկել, և եթէ Օսմ. կառավարութիւնն այդպիսի աշխարհավարութիւն մը բռնէ, և՝ ի մէջ այլոց՝ կատարեալ անկեղծութեամբ և եռանդեամբ բարենորոգումներ դործադրելու ձեռք դարձնէ, կրնայ միշտ վստահ լինիլ թէ Թուրքիոյ մէջ կեցած Անդղիական շահերը նոյն իսկ ազատական նախարարութիւնը պիտի ըստիպեն բարեկամ մնալ Բ. Դրան։ Յայնժամ Օսմանեան աէրութեան շահերը կրնան ապահովիլ, և բարենորոգմանց գործադրութիւնն ալ իր բարի արդիւնքը կունենայ։ Կը մընայ սակայն տեսնել թէ այսպիսի ընթացք մը պիտի բռնուի՞, և ի վերքան դամենայն, կը մնայ տեսնել թէ ազատականք վերջնական յաջողութիւն ձեռք պիտի բերե՞ն, որպէս դի ըստ այնմ աշխարհավարութեան փոփոխութիւն մը հարկաւոր լինի ազանց կողմէ, որք Լորտ Պիքոնսֆիլտի նախարարութեան պաշտօնի վրայ մընալուն մէջ շահ ունին։

* * *

Պերլինի դաշնագրին մէջ նշանակուած և մինչև յայսօր անկոյծ մնացած խնդրոյ լուծման համար աէրութեանց մէջ համաձայնութիւն դոյացած լինելուն լուրերը կ'սուդուին։

Վադրթ լրագիրը կը կարծէ թէ այս նպատակաւ աէրութեանց ընտրեալ ջանքերը խաղաղական պիտի լինին, և կըսէ թէ կախ մնացած խընդրոյ լուծումն հնար եղածին չափ Թուրքիայէն ալ կը փափաքուի։ Բայց և այնպէս յիշեալ լրագիրը կը կարծէ թէ կռուոյ վտանդներն ալ մնայուն են։

Յիշեալ թերթն Հելլենական խընդրոյն վրայ ալ հետևեալ խորհրդածութիւնը կ'ընէ։

"Զրոյց կար անցեալ շաբթու թէ Գերմանիա և Գաղղիա համաձայներ են Հելլենական խնդրոյն վրայ։ Այս զրոյցը կը հաստատուի։ Բայց կըսուի նաև թէ Աւստրիա այս համաձայնութեան արդիւնքին դէմ եղող լուծման դէմ դժուարութիւններ կը հանէ։

"Ցունաստանի կուսակիցք կը պնդեն թէ Արևելից մէջ Աւստրիոյ բռնած աշխարհավարութիւնը վտանգաւոր է։ Եթէ ատուդիւ այսպէս է, վերջին բանակցութիւններէն կը հասկցուի որ Ցունաստան մեզ հետ դաշնակցելու աշխարհավարութեան չմիտիր։ Վասն դի անհաւատալի կերպիւ տարածուիլ կուզէ Արևելից մէջ։

Անդղիոյ առաջարկած երկրաչափական յանձնախումբն անպատճառ պիտի դումարի։ Եթէ Բ. Դրան այս մասին ըրած ընդդիմութիւնն սկզբնական ազդեցութիւն չունեցաւ, դործնական տեսակէտով առանց արդաւորութեան չմնաց։

«Նախարարաց խորհուրդն երկիցը այս խնդրով զբաղեցաւ, և կերևի թէ նոր շրջաբերական ծանուցագիր մը աէրութեանց զրկելու դիտաւորութիւն ունի։»

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտրա 3 ապրիլ

Ամանաարա պահպանողական լրագիրը խորհրդարանական ընտրութեանց մէջ ազատականաց յաջողութիւնը հաստատելով՝ կարծէ թէ պահպանողական կուսակցութեան թափաւորութիւնն անցած է։

Թայմզ լրագիրը՝ Լորտ Կրանվիլն, Հարթինթընի մարքիզն և Գ. Կլատսթընը կը նշանակէ իբրև ազատական նոր նախարարութիւնը կազմելու անձինք։

Գէրլին 3 ապրիլ

Վիլհելմ կայսեր հիւանդութիւնը բարւոքած է։

Լոնտրա 3 ապրիլ.

Մինչև երէկ իրիկուն ծանուցեալ ընտրութեանց արդիւնքն է 271 ազատական և 141 պահպանողական։

Ազատականք մինչև ցարդ 59 ոթոռ կը շահին, որով մեծամասնութիւն կունենան առանց Իրլանդացի ինքնավարականներն ի հաշիւ առնելու։

Այս առաւօտ հասած հեռագիրք

Փարիզ 5 ապրիլ

Ժէրոմ Նաբոլէոն իշխանին կողմէ լրագրաց մէջ հրատարակեալ նամակ մը հաւանութիւն կը յայտնէ ժէզուիթաց և ոչ-արտօնաւոր կրօնական միաբանութեանց դէմ մարտ 29ին ելած հրամանագրոյն։ Նարոլէոն իշխանը նոյն նամակին մէջ Պոնապարթեանց դատը բացարձակապէս կը զատէ օրինաւորականաց և կղերականաց աշխարհավարութենէն։

Գէրլին 5 ապրիլ.

Գերմանական լրագիրք այս կը յայտնեն թէ Անգլիոյ մէջ նոր կազմուելիք ազատական նախարարութիւնը պիտի շարունակէ Լորտ Պիքոնֆիլտի աշխարհավարութիւնը։

Լոնտրա 3 ապրիլ.

Օսմ. Քոնս.		10 1/4
Փրիս.	1865	11 1/4
»	1869	10 3/4
»	1871	67 1/2
»	1872	18
»	1873	10 3/4
» Կպիպտ.		88 1/4
Անգլ. Քոնս.		98 7/16

Փարիզ 5 ապրիլ.

Օսմ. Քոնս.		10,40
» Երկաթուղի		35,50
Գաղղ. »	3 0/0	118,67 1/2
» »	3 0/0 Նոր	84,87 1/2

ՆՈՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մէք.քէի Շերիֆ Ապտիւլ Մէթալիպ էֆէնտին շաբաթ օրը Սելոզի պալատն երթալով Վեհ. Սուլթանին Ներկայանալէ յետոյ, հանդիսիւ Տոլմա—Պաղճէ դնաց և իրեն համար պատրաստուած արքունական Թալիա շոգենաւը մտնելով մեկնեցաւ մայրաքաղաքէն։

Ն. Վսեմութեան ուղեկից եղան նաև Ֆէրիդ Եահեա փաշան և այլ քանի մը զինուորականք, որոց պաշտօն յանձնուած է Հիճազի երկրագրական քարտէսը շինել և ռազմադիտական կարևոր կէտերու վրայ ամրոցներ շինել, որպէս զի թափառական Արաբայ արշաւանքներուն առաջն առնուի։

Կուսինէի և Փլավայի փոխարէն Գարատաղի տրուելիք հողին նկատմամբ եղած որոշումը կիրակի գիշեր Վեհ. Սուլթանէն վաւերացուելով Իտալիոյ դեսպանին հաղորդուեցաւ։

Կըսուի թէ Բ. Դրան առաջարկած փոխարինութեան կէտերն են Խօտ և Բալամինա գաւառակներն, Ճ.քօտրայի և Բօտկօրիցայի միջև, որոց բնակչաց մեծ մասը կաթոլիկ են։

Վաղքի լրագիրն այս կը ցուցնէ թէ այս անգամ խնդիրը վերջնականապէս լուծուելով՝ անհանգստութեան պատճառներէն մին կը վերնայ մէջ տեղէն։

Շաբաթ օրը նախարարաց խորհուրդը դումարուելով ելմտացոյցի խնդրոյն զբաղեցաւ։ Բարձր. Սաֆվէթի և Խայրէտտին փաշաներն ալ ներկայ գտնուեցան։

...

Տէլի Մէհմէտը դատելու պաշտօն ունեցող զինուորական ատեանն անցեալ հինգշաբթի աւուր բժշկական ժողովին առաջարկութեան համեմատ, յիշեալ Տէլի Մէհմէտը բժշկաց հսկողութեան յանձնեց։

Վաղքի լրագիրը կը ծանուցանէ թէ հասարակային կրթութեան նախարար Միւնիֆ փաշայի ջանքերը կալուածական փոխատուութեան Պանքա մը պիտի հաստատուի Կ. Պոլսոյ մէջ, տարին հարիւրին 10 տոկոսով անշարժ կալուածոց վրայ փոխատուութիւն ընելու համար, դլխաւորապէս Պուրդարիոյ և Արևելեան Բուլգարիի մէջ հողային կալուած ունեցողներուն, որք այլ և այլ տեղեր ապաստանած են։

Օսմանեան վարչության տեսուչ Պ. Բէյլոսի առաջարկութեամբ Բ. Դուռն որոշեց 19 նոր փարոս հաստատել Թուրքիոյ ծովեզերաց այլ և այլ կողմերը, դլխաւորապէս Միջերկրականի մէջ։

Մայրաքաղաքիս ծովափանց շինութեան համար Միշէլ փաշային ներկայած ծրագիրը քանի մը փոփոխութեամբ նոխարարաց խորհրդէն ընդունուելով Վեհ. Սուլթանին հաւանութեան ներկայացաւ։

Վաղքի լրագիրը կը ծանուցանէ թէ Տէլի Մէհմէտ՝ բժշկական ժողովին որոշման համեմատ շաբաթ օրը կառքով հիւանդանոց տարուած մը Ոյին շատ մը խելագարական շարժումներ ու գործեր ըրեր է, որոց համար ալ յատուկ տեղեկագիր մը շինուեր է։

Ամանաարա լրագիրը կը ծանուցանէ թէ Ռուսիոյ կայսրը 40000 հրացան և պատերազմական նաւ մը պարգևեր է Գուլլարիոյ։

Սէլանիկէն եկած պաշտօնական հեռագիրք կը ծանուցանեն թէ կայսերական զօրքերը փութոյ պնդութեամբ աւազակներուն ետևէն իյնալով, արդէն երեսունի չափ աւազակ սպաններ և ութ ալ ձերբակալեր են, կը յուսացուի եղեր թէ քիչ օրէն բոլոր դաւառը պիտի մաքրուի աւազակներէ։

Ցունաց Աւետման տօնին պատճառաւ այսօր Գօրսան գոց է։

ԱԶԳԱՅԻՆ

Կարմնէն Պատրիարքարան եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Գեր. Յարութիւն եպիսկոպոս առաջնորդութենէն հրաժարական տուեր և Գաւառական ժողովն ալ ընդհանուր հաւանութեամբ ընդուներ է։

Ասոր վրայ կրօնական և քաղաքական ժողովները խառն նիստ կազմելով Գեր. Հայր Օրմանեանը Տեղապահ ընտրեր և անմիջապէս կարմն ղրկուիլը խնդրեր են։

Ուրիշ հեռագիր մ'ալ նոյնպէս Ն. Գերապատուութեան փութով և Զատկէն կարմն առաջ ղրկուելու պէտքն յայտնած է։

Ս. Պատրիարք Հայրն երէկ առաջնորդական նոր ընտրութեան համար հեռագրով հրաման ղրկեց, և Գեր. Հայր Օրմանեանն և Զիւմրիութեան Զաքարիա և Պետրոս վարդապետներն՝ ըստ սովորութեան ընտրելի ներկայեց։

Ի նպաստ սովելոց Օրտուլէն 100 մէճիտիէ ղրկուած է ի Պատրիարքարան։

Երուսաղէմայ պարտուց բարձման խնդրոյն նկատմամբ կիրակի օրը մայրաքաղաքիս եկեղեցեաց մէջ շրջաբերական կոնդակներ կարդացուեցան։

Տեղեկութիւն կը տրուի մեզ թէ Գում-Գափուի Մայր վարժարանի հոգատարութեան ձախող ընթացից և շուայլ մատակարարութեան պատճառաւ ժողովրդեան մէջ դժգոհութեան ձայնները բարձրացեր և հեռանալու հանդգրութեան ձեռնարկեր է։

Գանգատանաց իրաւացի պատճառներէն մին ալ՝ թարգ. խորհուրդ հոգատարութիւն և միանգամայն ձեռնհաս և փարձառու ընդ հանուր կառավարիչ մը կիցած ժամանակ, այսպիսի նեղ ժամանակ մը 10 տակի ամամականաւ տեսուչ մը բերուիլն է, որուն պէտք չկայ եղեր։

Կը փափաքիմք որ այսպիսի ժամանակի մը մէջ՝ որչափ կարելի է՝ ներքին խնդիրներ չյարուցուին և հասարակաց պաշտօնէութիւնք իրենց յանձնուած վստահութեան պաշտօններն յօդուտ հասարակաց բարւոյն գործածեն, կարելի եղածին չափ ժամանակիս յառաջդիմական պահանջումներն ու հասարակաց բաղձանքը գոհացնելով և միանգամայն տնտեսագիտական սկզբունքներն յարգելով, այն է՝ հասարակաց դրամն յօդուտ և իշահ հասարակաց և եթ տնտեսելով, փոխն զի լաւագոյն գործեր տեսնելու համար իմաստուն տնտեսութիւն հարկաւոր է, ապա թէ ոչ, հետևանքը ծանր կը կշռէ։

Վանայ Մարմէտ գիւղէն մեզ ուղղեալ նամակ մը շնորհակալ որտիւ և օրհնութեամբ կը ծանուցանէ թէ տէրութեան ճարտարապետ Վսեմ. Սարգիս պէյ Պալեան յիշեալ գիւղին մէջ դպրոց մը շիներ, մէջը վարժապետներ դրեր, և աղայոյ ուսման համար պէտք եղած ամէն նիւթեր, դիրք, թուղթ, գրիչ եւ իւր ծախիւք կը հոգայ Սիմոն աղա Թադէոսեանի ձեռամբ։

Նամակագիրք կը խնդրեն մեզնէ որ իրենց սրտագին շնորհակալեաց և խորին երախտագիտութեան թարգմանն կանդնիմք իրենց աշնուախոհ բարերարին առջև։

Շաբաթ աւուր Հայրենիք լրագրոյ մէջ հետևեալ իրաւացի դիտողութիւնը կը տեսնեմք, որ Սովելոյ Կեդրոնական Մատաժողովին ուշադրութեան արժանի են։

«Սովելոյ Մատաժողովն անդադար նպաստ կը ղրկէ։ բայց խնդիր մ'է դիտելի թէ այս դրամներն անխնայաբար ամէն կարգի ազգայնոց արդարապէս կը բաշխուին։ թէ ինչ է այս տարին շարժառիթն ու աղբիւրը։ թէ ինչ դարման կրնայ լինել առաջն առնոյ համար ոչ միայն ներկային՝ այլ և ապագային մէջ։ թէ ըստ՞ դէ է որ ցորեան չկայ, և ցորեն ունեցողներն ինչո՞ւ համար չեն ուզեր ծախել, ո՞յք են ցորեն ունեցողները, կառավարութիւնը թէ մասնաւոր անձինք, հա՞յք թէ օտարազգիք, եւ եւ։

Ա.յս ամենը քննելու համար առանձին քննիչ մը ղրկելու անհրաժեշտ պէտք մը կըզդանք, ոչ միայն մեզ, այլ և շատեր այն ազգայիններէն՝ որք առատապէս մասնակցեցան հանգանակութեան։ Ուստի շատ ուրախ եղանք Մանդուամէի հիմնադրութի աւուր թերթը կարդալով, որ այսպիսի տաժանելի պաշտօնի մը համար ինքզինքն ընտրելի կը ներկայացնէ և պաշտօնական դիր մ'ալ ուզղեր է սովելոց մատաժողովոյ առնեալ։»

«Ըստ մեզ՝ փանտասան էֆ. այս մասին թէ՛ փարձառու է և թէ՛ պահանջուած հանգամանքներն ունի. սակայն սովելոց Մատաժողովն աւելի կարող և ձեռնհաս մէկը կը ղրկէ ևղեր, աւելի ազէկ. մեր նպատակը քննիչ մը ղրկելու կարևորութիւնն ու պէտքը զգացնել է, և կարծեմք թէ այս պէտքին նոյն ինքն Մատաժողովն ալ կը համաձայնի։ Չի տեսնուած է ամեն երկրի մէջ որ այնպիսի չարաշուք պարագայներու առեն իշխանութիւնը յատուկ պաշտօնակալներ կը ղրկէ ոչ միայն դրամ բաշխելու, այլ և իրաց վիճակը քննելու և տեղեկագրելու համար. վասն զի օգնելը միայն բաւական չէ, այլ սովուն աղէտից առաջն առնելու միջոցներն ալ խորհելու է՝ ոչ միայն ներկային՝ այլ և ապագային համար»։

Կ. Պոլիս 24 մարտ 1880

. . . Տէր.

Գրեթէ բոլոր օրաթերթեր այս օրերս հրատարակեցին թէ Եսսովելոց Պատուարժան յանձնաժողովոյ կողմէն ի Հայաստան դնալ որոշուած եմ եղեր։ Լրաթերթերէն քանիներ աւելի ևս յառաջ երթալով՝ այս ալ աւելցուցին թէ իմ և Յանձնաժողովոյ մէջ դրամականի մասին անհամաձայնութիւն ծագեր է։

Տէր, այս առթիւ կը փութամ յայտարարել թէ սովելոց Յանձնաժողովոյ կողմէն բնաւ ինձ ո և է առաջարկութիւն ուղղակի եղած չէ, հետևաբար դրամական մասին ևս ո և է անհամաձայնութիւն։ Ամեն նոքա, որ դիս մօտէն կը ճանչնան, դիտեն որ ես, պարծանօք կըսեմ, երբէք շահադիտաբար ծառայած չեմ ազգիս և հայրենեաց։ Ամեն տաեն ամեն կերպով զոհողութիւններն իմ կողմէս եղած են, պաշտօնս ալ զգուշութեամբ և հաւատարմութեամբ կատարելով, ահա այս պատճառաւ է որ ցարդ ոչ Հայրապետական կամ Պատրիարքական և կամ Սրբոյնական նշանի և շնորհի արժանի եղած եմ և կամ դէթ դրամ շահած եմ։ . . .

Հերու քանի քանի անգամ զբերեցի 'ի Պատրիարքարան Հայաստանի մէջ տիրած երաշտութեան և սպառնացեալ սովուն վրայ, մանաւանդ Պայազիտի և Ալաշկերտի համար։ Պայազիտի առաջնորդը յատկապէս Վեհ. Կաթողիկոսին ղրկուեցաւ, բայց ձեռնունայն վերադարձաւ. պատերազմի տաեն դաղթելոց համար հանդանակեալ դումարին մնացորդ 16000 բուպլին, որ ի պահեստի էր յիջմիածին, ուզուեցաւ, որպէս զի ցորեն առնուի ու բաշխուի, չտրուեցաւ՝ այս առարկութեամբ թէ դպրոցաց ազգային համար վերապահեալ է։ Կարնոյ տեղական իշխանութեան ուշադրութիւնը խնդրուեցաւ ոչ միայն տեղական ազգային վարչութեան կողմէն, այլ և Անգղիոյ հիւպատոսի կողմէն յաճախակի, որ և երկիցս Ալաշկերտ և 'ի Բասէն գնալով՝ անձամբ ստոյգ տեղեկութիւններ բերաւ, բայց լսող չեղաւ։ Միայն այս ամենուն հետևանքն այս եղաւ որ Պատրիարքարանէն (100) հարիւր Օսմ. ոսկի հատաւ ի Կարին, որ Պայազիտի և Ալաշկերտի չբաւարարաց բաժնուի...։

Տէր, հարկաւ ժողովրդեան մը կամ երկրի մը վիճակ դառնալէ կը լինի, երբոր ի սկզբան պատահարաց առջև անզգոյշ կը մնայ և ապա ծարը ծարին կը դրծէ, երբ բանը բանէն անցեր է, և իր այս թոյլ վարքն

մունքը արդարացնելու համար «լաւ է անագան քան երբէք,» ըսուած առածով կը մխիթարուի։ Ինչևիցէ, հիմակ որ սովը սասակացեալ է, և աւելի ևս չճարակուելու և չշարունակուելու համար նախահոգ միջոցներու դիմելու պարտաւոր եմք, հրապարակաւ կը յայտնեմ իբրև փորձառու ոք, որ սովերոց Ցանձնաժողովը շատ լաւ կընէ, եթէ կարող և փորձ, երկրին և բնակչաց ծանօթ և ազդեցիկ երկու անձեր ղրկէ, մին ի Բասէն և ի Պայազիտ և միւսն ի Վան։ Սոքա պէտք է որ ապրիլ և մայիս ամիսներուն հոնտեղուանքը դանուին, կոչեն գիւղերուն տէրտէրներն ու Բէյներն ու Թեհեանները, ոչ թէ միայն դարնցան սերմ ցու ցորենին հայթայթման և ցանելու մասին միջոցներ դանեն ու ցոյց տան նոցա, այլ և յորդոր, սատ և ամեն արագ և ապրուս միջոցներ ի դործ դնելով՝ սոխպեն ղանոնք, որ գիւղացի աղքատներուն ամեն կերպով օգնեն, մանաւանդ աղքատաց արտերը հերկելու համար՝ կամ փոխ և կամ ձրի տան իրենց եղներն ու դոմէշներ։

Վասն զի այսպիսի ժամանակներու մէջ մեր դեղերուն և մինչև իսկ քաղաքներուն ջոջ ունևորները կըլնան իրենց շահադիտական դերերը խաղալ, այսինքն չեն տար իրենց եղներն, որպէս զի դրացի աղքատին արաը անհնակ մնայ, և ապա ձմրան իրենց կարօտ մնայ, պարտքեան ըլլայ, և աժան դնով մը յետոյ գիւրութիւն ունենան տէր ըլլալու նոյն արտին։

Գնացող երկու պաշտօնէից ծախուց մէջ շատ խնայութիւն լինելու է, դրամը մեր սովալլուկ եղբարց կենաց հոգին է, բժիշկ ու դեղ Հայաստանի ամեն քաղաքաց մէջ կան հիմա, կրնան դործածուիլ, եթէ հարկ լինի, միայն ի Պայազիտ բըժիշկ չկայ։ ուր կրնայ տարուիլ կարինէն։ Ամենէն կարևորն և առաջինը՝ ցորեն ճարելն ու բաշխել ու արտերը հերկել տալն է, որպէս զի դարընցանովդ աշնան գիւղացիք հայ ունենան։ Ապա թէ ոչ՝ արդի սովը մինչև դալ ձմեռան վերջը կը շարունակի։

Գնացողները այսօրուընէ մեկնելու են, վասն զի վտանգը մեծ է և պատասխանատուութիւնն ահաւոր։

Մնամ Տէր, ողջունիւտ Ձեզ

Վահան Վարդապետ

Յիշնեմիա 18 մարտ 1880

• • • Խմբագիր •

Նիկոմիդիոյ շրջակայ գիւղերն աղքատութեան անհնարին տաւապանաց մէջ կը տուայտին։ Շնորհակալ եղած է ժողովուրդը իւր ազդային սովերոց Ցանձնաժողովոյ բարերարութենէն, որ ամենայապէս օգնութիւն փութացնելով՝ մեծապէս մխիթարեց զիրենք։ Շնորհակալ է նաև կառավարութենէն, որ արքունի շտեմարանաց մէջ պատրաստ ունեցած արմտիքները չափով մը ցրուեց մօտակայ ժողովրդեան աղքատներուն։

Սակայն այս առթիւ խնդիր մ'անցած է քաղաքիս իտարէի ժողովոյ մէջ, և կը պատմուի ասոր անոր բերանը, զոր ես ալ լսելով խիստ հաւատարիմ ապրիւրէ՝ զարմանօք և սրտմտութեամբ լեցուեցայ։ Ահաւասիկ պատմուածը։

Նիկոմիդիոյ կուսակալութեան ներքև փոքր գաւառ մը կայ «Բարասու» անունով, ուր մէկ երկու հարիւր Հայ և Ցոյն գաղթական ընտանիք կը բնակին, արուեստիւ ատաղձագործ, և Եդիպտացորենոյ և ծխախոտոյ մշակութեան պարապող՝ այս գաղթականները սովամահ լինելու միճակին մէջ իմանալով ուղղակի Կ. Պոլիս կը հեռագրեն, ապրիլ ալ Նիկոմիդիոյ Իտարէին թէ՝ հարցու Ցն կըլլայ՝ և թէ՝ կը հրամայուի որ՝ հարկ եղածը ժամ յապաղ տնօրինուի ի նպաստ նոյն գաղթականաց սովելոց։ Նիկոմիդիոյ Իտարէի ժողովոյն մէջ նիստ ունեցող անդամ մը, որ ձեռքի տակէ նոյն գաւառին արքունի շտեմարանաց արմտիքը ծախու առած է, ժողովոյն առաջ կուտայ Կ. Պոլսէ եկած հեռագրոյն պատասխանելու՝ թէ այդ սովելոյ ժողովուրդը առաղձագործ ըլլալով՝ կերպ մը փաճառական կը սեպուին, Բարասուի ամպարէն կրնան ծախու առնել։ Ի հարկէ այդ խորամանկ և շահամոլ անդամին նպատակն այն էր որ իւր ծախու առած արմտիքը սուղ և առատապէսցուցիչ արժէքով ծախուի սովեալ աղքատներուն։

Գիտնալ պէտք է՝ որ այս գաղթականները Հայ և Ցոյն են ազգաւ, և Տրապիզոնի կամ Լազիստանի կողմը դանուած կալուածատեր հարստահարիչներուն ձեռքէն մազապուր փախչելով՝ 5-6 տարիէ ի վեր զեռեզեռ են Բարասու նահանգին լեռնամէջ տեղուանք։

Ահաւասիկ, Տէր, այնպիսի դիպուած մը, որ թէ՝ Կ. Կառավարութեան և թէ՝ սովելոյ Ցանձնախմբի մարդասիրական ջանից բարերարութեան հակապատկերն է։ սակայն դժբաղդաբար այսպիսի կարգէ դուրս և խըժդըժական շահամոլութեամբ հարբատացեալներ՝ ի նախատինս կառավարութեան և ի պատուհաս ազգատաց՝ Իտարէի ժողովոյ մէջ նիստ և պատիւ կունենան։ Մնամ

* * *

Տրապիզոն 11 մարտ 1880

• • • Խմբագրապետ •

Տրապիզոն ցայսօր չունի իւր դըրկոյ վայել եկեղեցի մը։ երեք հատ կան՝ երեքն ալ անշուք և փոքր։ Այս անգամ Գեր. Առաջնորդ Հօր խրախուսանօք ընկերութիւն մը կազմուեցաւ մեկ ղրուշ շաբաթականով վայելուչ եկեղեցի մը շինելու նպատակաւ։ Տրապիզանցւոյ ամենամեծ մասն և հիւր ազգայինք մասնակցեցան սոյն ընկերութեան, և ամեն հաւանականութիւնք կը ցուցնեն թէ պիտի յաջողին՝ եթէ յարատևեն իրենց ձեռնարկին մէջ։

Այսօր ամեն ողջամիտ մարդ կը խոստովանի թէ դպրոցը եկեղեցւոյ լրացուցիչն է, ուստի շատ յուսալի և բաղձալի է որ Տրապիզոնցիք իրենց եկեղեցւոյ վրայ խորհած տաեն դպրոցն ալ շինուին և միանգամ ընդ միշտ բառնան այն անտանելութիւնն որ շատ մ'անկարգութեանց և յետադիմութեան պատճառ ըլլալէն զատ քննադատութեան ալ առիթ կուտայ, ինչպէս որ վերջերս Հայրենիքի մէջ տեսնուեցաւ։

Իրաւ է որ Տրապիզոնցիք իրենք ալ կը խոստովանին անոնց միճակին շատ փափաքելի չըլլալը, սակայն միայն չարիքը ճանչնալը բաւական չէ, այլ քաջութիւնը չարիքը դարման մը դտնելն է։ Ի պատիւ Տրապիզոնցւոյ ըսել պէտք է այսպէս թէ իրենք գրեթէ առաջին եղած են այս կողմերն ուսման յարգն ու կարևորութիւնը ճանչնալու մասին։ հիմայ որ ամեն կողմ կը շարժի և դէպի լոյս կը դիմէ, Տրապիզոնցւոյ անկէ որ իրենց առաջնութիւնը միշտ պահեն ինչպէս ցայժմ։

Սովելոյ կենդանական մասնախորհրդին առ Տրապիզոնցիս ըրած յորդորն անլսելի չմնաց և միայն քաղաքիս մէջ իրը 160 Օսմ. լիրա հաւաքուելով իւր աեղը զետեղուեցաւ։

Կը յուսացուի որ միճակին միւս քաղաքներն ալ իրենց վայել չափով մը կը մասնակցին այս գթութեան գործոյն։

Գանի մը պաշտօնատարներ դանդաղաբար ըլլալով դաւառիս կուսակալն ի Պոլիս, Իսթիպ ի ծանօթ գրքուքեամբ հարցուած է ատ թէ արդեօք երաւայլ են դանդատներն, և այժմ հանրագրութիւն մը կը հաւաքուի ի Ջատագովութիւն կուսակալին։ տեսանենք արդիւնքն ի՞նչ կըլլայ։ Սիւրմէնէի ոճիրին հեղինակներէն մին տակաւին բռնուած չէ և արձակ համարձակ կը պտըտի իւր գիւղը, չդիտցուիր ինչ պատճառաւ, քանի որ այնքան բողոքներ կան ասոր վրայով։ Վասեմ Սրբրի փաշայի ուրիշ առիթներու մէջ ցուցած դարձունեութեան և կարուկ ընթացքին չհամապատասխաներ այս։

Այս տարի Տրապիզոնի մէջ երկար տարիներէ ի վեր չտեսնուած սառատիկ և երկար ձմեռ ըրաւ։ Հարիւրեակի ջերմաչափը 0էն մինչև 10–12 սառիճան վար իջաւ։ Ոմանք Պոլսէն կրկնապատիկ սուղ ծախսեցաւ, սակայն այս վայրկենիս կերևայ թէ ձմեռն անցած է և արդէն գարնան դաւն հասած են։ Այս ձմեռ միայն Ցոխները թատերական ներկայացումներ կրցան տալ իրենց երիտասարդաց շնորհիւ որք անձնուիրաբար դերերը կատարեցին։ Ներկայացմանց արդիւնքն իրենց Սեւլեզուին և դպրոցներուն յատկացեալ էր։ Այս երկու տարի է որ քանի մ'ոսկի ծախսուց համար՝ չենք կրնար աղջկանց վարժարանն առանձին տեղ մը փոխադրել։ եթէ ժամանակիս ոգին հասկցող և փոքր ի շատե անձնուէր երիտասարդներ ունենայինք, կրնայինք մենք ալ մեղի պէտք եղածն աւելի սատակ հաւաքել և միանդամայն կրթել ժողովուրդն զբօսցնելով. ափսո՛ս որ ցայժմ՝ չէ կազմուեր այդ երիտասարդութիւնը։

Ձեր ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Ի ՄԱՀ

ՎԱՂԱՄԵՌԻԿ ՎԻՐԺԻՆԻ

Անյագ ե՞անդուլ խոր անդունդը չիրիմին
Քեզ զեռ շատ մութ շատ խոնաւ չէ, ո՛ Վիրժին.
Դեռ նոր ծլած զերթ կարմրագեղ վարդ չքնաղ
Աւա՜ղ ինչո՞ւ դու այդչափ շուտ թառամեցար։
Հրեշտակային դէմքիդ վրայ փայլեին
Սէր յոյս և գեղ ու հեզութիւն երկնային.
Անմեղ հոգեակդ նոր սուրբ սիրով կը խայտար.
Ո՜հ դու ինչո՞ւ մութ գերեզման դրուեցար։
Երբ Աստուած քեզ զերթ մի ժպիտ տեղծեց,
Ծաղիկներէ քո նուրբ հատակդ յօրինեց,
Գիշերային փայլուն աստղէ քո աչեր,
Եւ հոգւոյդ մէջ անմեղութիւնն էր դրեր։
Ինն ամսան թերթիւք հատակդ պճնուած
Եւ երկնային բոյոր գեղովք զարդարուած.
Ո՜ զեռ հազի տարուան մի հարս դու եղած,
Ո՜հ հարս գացեր գերեզմանին սև ոգեաց։
Ո՜հ դեռ շատ մութ է գերեզման քեզ համար.
Մահուան խժռոտ դէմքը դու շատ շուտ տեսար.
Մաքուր քո սիրտ ցնորաց մէջ ընկղմած
Սէրը հոգիս իւր գեղով քեզ էր ժպտած։
Գարնանային ծաղկի նման բացուեցար
Եւ հոգիս գեղիւսին պէս շատ թառամեցար։
Ծաղիկ մարմնիկ գեղիւս հոգեակ ո՜հ ինչո՞ւ
Այսպէս չուտով այս մեր աշխարհ կրթողուս։
Ո՜հ շեմք կարող գքեզ մոռնալ, ո՛ Վիրժին
Մինչ քո շնորհներ ցուրտ հողին տակ կը փտին,
Մինչ կը նստիս անձայն այդ պաղ քարին տակ,
Ո՜հ շեմք մոռնար մեք դու քաղցր մեղուակ։

Քեզ լոյս աշխարհ, քեզ լան երկին և երկիր,
Քեզ լոյս արև իւր աչերով հրալիր,
Ու երբ լուսին չիրմիդ վերայ լոյս սփռէ,
Իւր ծոցերով նա քու մրագ կարատուէ։
Գերեզմանիդ ծաղիկները օրրելով
Քեզ լոյս զեփիւռ քաղցրամրմունչ հեծելով,
Քեզ լոյս սոխակ և իւր երգով դաշնաւոր,
Մահուանդ երգը նա գեղգեղէ սգաւոր։
Քեզ արտասուէ քու մայրդ ալ խանդաւառ
Ու ամուսնդ ոչ ևս դանէ մխիթար.
Եւ երկուքն ալ չիրմիդ վրայ յաւիտեան
Հեծեծանօք վաղահաս մահդ պիտի լան։
Գթա՛ նոցա աղջիկ և հարս սիրական.
Եղիր երբեմն նոցա երազ ազուական,
Ի կերպարան հրեշտակի կամ թռչնիկի
Նոցա քովը մերթ եղիր, ո՛ Վիրժինի։

Ս-ՊԷԴ։ Զօրանեան

ԻԼԱՆ

Ասաքիրի շուհանէ տպայ վէ թապուրլէրի իլէ խասթախանէլէր իչուն սօղան սլթը սէնէսի մարթընան շուպաթ նիհայէթինէ գատար ճինս վէ մրդատրը մահֆուզ պուլունան տէֆթէրատէ մուհարրէր էճզայի թըպլիյէ վէ պայթարլիյէ վէ ալաթ վէ էտէվաթը ըսրէնչարլիյէ վէ ճերահիյէնին միւպայիսընա լուղում կէօրիւնմիւշ օլմաղ իլէ, պունպարը իթա իթմէյէ թալէպ օլանլարն մարթ բուսինին եիկիրմի իքինճի ճիւմաա իրթէսի կիւնիւնտէն եիկիրմի եէտինճի բէնճչենպիհ կիւնիւնէ գատար հաշպլիյէ նէզարէթի լէվաղիմսթը ուսուսիյէ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլուսունը։

20 մարտ 1880

Գաղը Սէրասքէրի

Խատէմէի ճէնտարը Մուլիւքեանէ իչուն չուբա վէ էճզայի սայիրէսի քեսմիլէն Էլպիսէ անպարընան վիրիմէք վէ՝ անպարատա մէմուրլարը մուվաճէհէսինատէ գրթա խաիրմէք վէ անպարը թէէմին խաերէք քէֆիլ իրայէսի իլէ անպարատան ալընուպ մահալը մսխասուղարընատա իսմալ խատուղ թէսլիմ անպար իյլէմէք վէ թարիխի դարարընատա գրթա վէ իսմալինէ պէտէն իլէ պիր հաֆթա պիրէր բուսուղ գրթա վէ իսմալ գրլընմադ վէ պիրինճի հաֆթա իսմալ օլունաճադ էլպիսէ իւճրէթինէն նըսֆը մաղ պուղ սէնէսինին վիրուտինատէ հէման վէ նըսֆը տիկերի իքինճի հաֆթա իսմալ օլունաճադ էլպիսէնին հէման իթա օլունաճադ նըսֆը իւճրէթիյլէ պէրապէր սիմ մէճիտիէ օն տօղուղ ղրուշ հիսապիյլէ անպարը մէգքիւրատէն վիրիլմէք վէ իւչինճի տէօրտունճիհաֆթալարա տոխի պու եօլատա մուամէլէ օլունմադ վէ ֆագաթի միւթէահիւտէ սուհուլթի օլմադ իւզրէ էլպիսէլէրի գրթա վէ իսմալէ միւպարըրէթ իթմէկի վագրթի իւճրէթը մէգքիւրէ մահսուպէն քէֆիլ ալողլէ տրի իւլ հիսապ օլարադ բէշինէն իւչ պէն ղրուշ անպար թարաֆընատան վիրիլմէք չարթը վէ չէրայիթը սայրէի միւթէֆէրրիտիյլէ գրթա վէ իսմալ իթտիրիլէճէք տէօրթ եիւզ էլի իւչ թադըմ գրատա էթէքլի սէթրի բանթօլօնուն պէհէր թադըմինին իւճրէթը գրթայէ վէ խատթիյէսի օն տօղուղ ղրուշա օլարադ թալիպլէրի էօհտէսինատէ օրուպ մարթը բուսինին եիկիրմի ալթընճը չէարչէպիհ կիւնիւ դարարը դաթիսի վերիլէճէյինատէն, իսմալինէ թալիպ օլանլարըն եէվմի մէգքիւրատէ հարպլիյէ նէզարէթի լէվաղիմսթը ատայրէսինէ կէլմէլէրի։

23 մարտ 1880

Գաղը Սէրասքէրի

Advertisements referring to British or American Goods, etc., are exclusively received for this Paper at
EUG. MICOUD'S Foreign Advertising Agency 139—140, Fleet Street, London.

ՅՈՒԹԻՒՆԷ ՏԻՐ ՊՈՒԱՍԿՈՊՔ

ՊԱՐՈՆ ԼՐԴՅՕԳԻ ԾԵՐՈՒԹԻՒՆԸ

Թարգմանեց Մխոաք Ի. Խաչիկեան

Նախկին աշակերտ Կայս. վարժարանի

ԶՕ՝ սա Մեծին Եկեղեցի Մեծաբերան

Ֆրանսայի արդի հռչակաւոր վիպասան Ֆօռդիւնէ տիւ Պուատոպլէի սոյն արտաքոյ կարգի հետաքրքրաշարժ վիպասանութեան, որ դատական ամենաերևելի լանգրով մը կըզբաղի, Ա. մասն ի լոյս ընծայուած է և կը գտնուի բոլոր Հայ գրավաճառաց քով ու կամուրջին գլուխ Ջրավաճառ Պօղոս ազայի խանութին, ի դին մէկ քառորդ մէճիտ։

Սոյն ամենասքանչելի գործին միւս մասերն հետզհետէ պիտի հրատարակին, սուղ ժամանակի մէջ։

ԴԱՍԱԳԻՐՔ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ

Հեղինակեալ ընտրեալ հեղինակաց ընդարձակեան դպրոցի

ԳՐԵՑ ՆԱՀԱՊԵՏ ՌՈՒՍԻՆԵԱՆ

Դասատու Փիլիսոփայութեան և բժշկական բնագիտութեան 'ի կայսերական ընժշկական ուսումնարանին Կ. Պոլսոյ։

ԵՒ ԹԱՐԳՄԱՆԵՑ Ս. ԷՄԻԷՐՃԵԱՆ

Ի Ֆրանսերէն բնագրէն

Ցղափբեալ ծախիւ

ՄԵԾ. ՅՕՀԱՆՆԷՍ ԿԻՒՄԻՒՇԵԱՆԻ

Ի Նպաստ Աբարատեան, Գալրոցասիրաց-Արևելեան և Կիլիկեան ընկերութեանց

Կը գտնուի Ց. Գաֆֆեանի գրաւուռնը և այլ գրավաճառաց քով. դին 6 ղրշ արծաթ։



ԱՆԿՈՂՆԱՐԱՆ ԿԱՄ ՄԱՀՃԱԿԱԼ

Աղնիւ և հասարակ քարէօլաներ երկաթէ և արոյրէ, աժան գիներով կը ծախուի, Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։

ԱՐԳՈՒԿ

Այս ձև իւթիւներուն ամենէն աղէկ տեսակը որուն մէջ կրակը չը մարիր և աղէկ կը գործէ, կը ծախուի Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։

ԿԱՐԻ ԳՈՐԾԻՔ

Փոքր «Ալանձէր» կոչուած ձեռքով դարձող ու անքակ կար կարող գործիքը ամեն տեսակ կար մեծ դիւրութեամբ կը կարէ ու դիմն ալ աժան է, երաշխաւորութեամբ կը տրըւի, ուրուածները կըշտկուի ու կարել չգիտցողին դաս կը տրուի. կը ծախուի Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։



ՇԷՐԲԷԹԻ ԽԱՑՐԻԷԻ

ՇՈԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1880 ՄԱՐՏ 15 ՇԱԲԱԹ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ ՄԱՐՏ 31

ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Ժամ	Եւրոպական Եղանակ	Թիւ
12 15	Եկեղեցական Մէջար. Պէշիք. Թար. Եկեղեցական Սմէն. Պոյաճ. Ր Հիսար, Պէշիք։ (Արևաւուտ գիւղի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի.)	33
1 15	Եկեղեցական. Մէջար. Պէշիք. Թար Եկեղեցական Էմիր. Ր Հիսար Պէշիք	20
2	Ր Ա. Գավաղէն Եկեղեցական. Մէջ. Պէշիք. Թար, Եկեղեցական Սմէն. Էմիրկ. Պոյաճը Ր Հիսար. Պէշիք. Արնավ. Օրթաք։ (Ուրբաթ օրերը Գուրուչ. Պէշիկ.)	32
3 15	Մէջարպ. Պէշիքա. Թարապիա, Եկեղեցական Սմէն. Էմիրկ. Ր Հիսար. Պէշիք. Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկ. (Ուրբաթ օրերը ½ 1/2ին Եկեղեցական)	33
5	Եկեղեցական. Մէջար. Պէշիքա. Թար. Եկեղեցական Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պէշիք, Արնավ, Օրթաք. Պէշիկ։ (Բացի ուրբաթէ)։	21
6 30	Եկեղեցական Պէշիքա. Թար. Պէյդօղ. Եկեղեցական Էմիրկէն. Գանլըճա Ր. Ա Հիսար, Գանտիլլի. Արնվ. Զէնկ. Պէյլ Օրթ. Գուզկունճ. Պէշիկ. Իսկիւտար։	4
8	Ա. և Ր. Գավագ Եկեղեցական. Մէջ. Պէշիքա. Թար. Պէյդօղ. Եկեղեցական Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պէշիք, Արնվ. Գուր. Օրթաք. Պէշիկ։ (Ուրբաթ օրերը Սմէնեա)։	20
10	Մէջարպուրնուէն Պէշիքա. Թարապիա, Եկեղեցական Էմիրկէն, Ր. Հիսար, Արնավ. Օրթաքէօյ, Պէշիկթաշ	22

Աբնաւոտ էնէն

Ժամ	Եւրոպական Եղանակ	Թիւ
12 30	Արնավ, Գուր, Օրթաք, Պէշիկ.	28
1	Արնավուտաքէօյ, Գուրուչ. Օրթաք. Պէշիկ. Գալաթա։	2
1 30	Պէշիք, Արնավ, Գուրուչ. Օրթաք. Պէշիկ, Գալաթա.	22
2 15	Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիկ.	28
3	Արնավ. Գուր. Օրթաք. Գուզկ. Պէշիկ. (բացի ուրբաթէ)	2
10 15	Արնավ. ուղղակի կամուրջ։	21
10 45	Գուրուչ. » »	28

Աֆչալան Եղանակ

Ժամ	Եւրոպական Եղանակ	Թիւ
12 30	Պէյքօղ, Բաշապ. Ր. Փաշա մահ. Գանլըճա, Ա. Հիսար, Գանտիլլի, Վանիք. Զէնկէլքէօյ, Պէյլ. Գուզկ։	21
12 30	Արնավ. Վանիքէօյ, Զէնկէլ. Պէյլեր. Գուզկ. Գալաթա։	4
1 15	Պէշիքա. Թար. Պէյքօղ, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկէլ. Պէյլ. Գուզկ. Գալաթ. (Ուրբաթ օրերը ժամ 1 1/2ին)	12
3	Պէշիքա. Թար. Պէյքօղ Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Զէնկէլ. Պէյլ. Գուզկ (Ուրբ. օրերը ժամ 4ին)։	23
8 15	Պէշիքա. Պէյքօղ, Բաշապ. Գանլըճա, Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկէլ. Պէյլերպէյ, Գուզկ. Իսկ. (Ուրբաթ օրերը Բիֆաթ փաշա մահալլէսի)։	2

ԿԱՄՈՒՐՋԷՆ ԵԼՆՈՂ ՇՈԳԵՆԱՆԻՒԵՐԸ

Ժամ	Եւրոպական Եղանակ	Թիւ
2	Գալաթ. Իսկ. Պէշիկ. Գուզկ. Օրթ. Պէյլ. Զէնկ. Արնվ. Գանտ. Ա. և Ր. Հիսար. Գանը Էմիրկէն, Եկեղեցական. Պէյքօղ Թարապ. Պէշիքա. Եկեղեցական։	4
2 15	Պէշիկ. Օրթաք. Արնավ. Ր. Հիսար, Էմիրկ. Եկեղեցական. Թար. Պէշիքա. Մէջարպ.	33
4 45	Գալաթ. Պէշիկ. Օրթաք. Արնվ. Պէպէկ Ր. Հիսար, Պոյաճ. Էմիրկ. Եկեղեցական. Պէյքօղ, Թար. Պէշիքա. Մէջար. Եկեղեցական. Գավաղները։ (Ուրբաթ օրերը Սմէնեա)	20
6 30	Իսկ. Պէշիկ. Գուզկ. Օրթաք. Պէյլ. Զէնկ. Արնավ. Գանտ. Ր. Հիսար, Պոյաճ. Եկեղեցական. Թար. Պէշիքա։	2
8 15	Պէշիկ. Օրթաք. Արնավ. Պէպէկ Ր. Հիսար, Էմիրկ. Եկեղեցական. Թարապ. Պէշիքա. Մէջարպ.	22
10	Արնավ. Պէպէկ, Ր. Հիսար, Պոյաճ, Էմիրկ. Եկեղեցական. Թարապ. Պէշիքա. Մէջարպ. Եկեղեցական։	33
10 40	Պէշիկ, Օրթաք. Արնավ. Պէպէկ, Ր. Հիսար, Էմիրկ. Սմէն. Եկեղեցական. Թարապ. Պէշիքա. Մէջարպ. Եկեղեցական	32
11 10	Պէպէկ Ր. Հիսար, Պոյաճ. Սմէն. Եկեղեցական. Թարպ. Պէշիքա Մէջար. Եկեղեցական։ (Հարաւային օդերուն Սմէնեա չհանդիպիր)	20

Աբնավուտ էնէն

Ժամ	Եւրոպական Եղանակ	Թիւ
1 45	Ուղղակի Արնավուտաքէօյ։	28
2 15	» » Բացի ուրբաթէ.)	2
9 30	Գալաթ. Պէշիկթ. Օրթաք. Գուր. Արնավ։	21
10 15	Պէշիկ. Օրթաք. Գուր.	28
11 5	Գալաթ, Պէշիկ, Օրթաք, Գուրուչ. Արնավ.	2
11 45	Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավ.	28
12	Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավուտ.	4

Աֆչալան Եղանակ

Ժամ	Եւրոպական Եղանակ	Թիւ
2 45	Իսկիւտար Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյքօղ, Թարապ. Պէշիքա։ (Ուրբաթ օրերը Բիֆաթ փաշա մահ.)	21
9 45	Գուզկ. Պէյլերպ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյքօղ, Մէջարպ. Ր. և Ա. Գավաղ։ (Ուրբաթ օրերը ժամ 10ին)։	12
10 30	Գալաթ. Գուզկ, Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտիլլի, Ա. Հիս, Գանլ. Զուալուզ, Բաշ. Պէյքօղ, Թրպ, Պէշիքա։ (Բացի ուրբաթէ)։	23
11 10	Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտիլ. Ա. Հիսար, Գանլճ. Բաշապ. Պէյքօղ։	21
11 40	Գալաթ. Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Պէպէկ.	22

ԻԻՄԿԻԻՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Իսկիւտարէն Կամուրջ. Ժամ	Ժամ	Կամուրջէն Իսկիւտար. Ժամ	Ժամ
		1 15	8 30
1		1 40	9
1 25		2 10	9 25
2	8 15	2 40	9 50
2 30	8 35 Պէշիքթաշ	3 10	10 10
2 55	9 10	3 40	10 40
3 30	9 35	4 10	11
4	10	4 40	11 20
4 25	10 25	5 10 Պէյքթ.	11 40
5	10 45	6	11 50
5 25	11 5	6 30	12 5
6	11 25	7 10	
6 35	11 40	8	
7 10	12		

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Իսկիւտարէն Կամուրջ Ժամ	Ժամ	Կամուրջէն Իսկիւտար Ժամ	Ժամ
		1 15	6 45
1 15	6 50	1 15	7 15
1 45	7 15	2 15	8 10
2 15	8 15	2 15	8 50
2 50	8 45 Պէշիքթաշ	3 20	9 20
3 20	9 20	3 50	10
4	9 50	4 30	10 30
4 30	10 30	5 Պէյքթ.	11 5
5 15	11	5 40	11 35
5 45	11 30	6 10	12 5
6 15	12		

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի՝ բաց 'ի կիրակի և տօն օրերէ։

Բաժանորդագրութեան տեղն է Ղալաթիա Սանտրգճըլար Ճատատէսի թիւ 198, Նօրօ խան Մասխի խմբագրատունը։ Իսկ դաւառաց մէջ հետևեալ հոդաբարձուաց դրասենեակները.

ԿԱՐԻՆ. Կարապետ էֆ. Զաքարեան.
ԵՐԶՆԿԱ. Ց. Շաւարշ էֆ..
ՍԵԲԱՍՏԻԱ. Նազարէթ էֆ. Ց. Խաթամպօղլեանց.
ԱԼԱՄՈՒՌՆ. Եղուարդ էֆ. Մուրատեան
ԿԻՐԱՆՈՒՆ Գ. էֆ. Խ. Մաղմանեան.
ՌՈՏՈՍԹՕ. Արժ. Տ. Արիստակէս աւագ քահանայ Ֆէյզեան.
ԶՄԻՒՌՆԻԱ. Գրիգոր էֆ. Մսերեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. Խոսրով » Էսկիճեան.
ՏՐԱԳԻԶՈՆ. Ս. Եղիազարեան էֆէնտի։
ԵՒԴՈԿԻԱ.
ՓԱՐԲԵՐԴ և ՏԻՐՍԻՄ. Կիրակոս էֆ. Ս. Ղազանճեան.
ՄՈՒՇ. Յակոբ էֆ. Ծերունեան.
ՎԱՆ.
ԲԵՐԻԱ. Սեդրակ » Խարամեան.
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. Թովմաս էֆ. Թաշճեան.
ԵԴԵՍԻԱ. Գէորգ էֆ. Ոսկերչեան.
ՖՕՔՇԱՆ. Ֆէրհատ » Ս. Ֆէրհատեան.
ՏՓԽԻՍ. Պ. Նիկողայոս Տ. Ղևոնդեան.
ԿԱԼԿԱԹԱ. Պետրոս էֆ. Հէքիմեան.

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԷՒԹԻՒՇԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԷՐԱԳՐՈՑ
ՂԱԼԱԹԱ ՆՕՐՕ ԽԱՆ